# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտ
համայնք, , Հեռ. 0322-6-91-92 , arjutigyuxapetaran@mail.ru

N ԳԱ59
*30 հունիս 2014թ.*

**ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ**
**ՄԱՐԶՊԵՏ**
**ԱՐԹՈՒՐ ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻՆ**

Կից Ձեզ ենք ներկայացնում Արջուտ համայնքի ավագանու թիվ 08-Ա, 09-Ա և 10-Ա որոշումները:

Առդիր՝ 1 էջ:

X ____________________

**ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՐԴԱՆ ՄԿՐՏՉՅԱՆ**

*Կատ. Արջուտի գյուղապետարանի աշխատակազմի քարտուղար՝ Հ. Մացակյան*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

13.06.2014թ. թիվ 08-Ա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՄԱՅՆՔ ՄՏՆՈՂ ԽՄԵԼՈՒ ՋՐԻ ՋՐԱԳԾԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

Համայնք մտնող խմելու ջրի ջրագծի վերանորոգման աշխատանքների կատարման արժեքը կազմում է 300 000 /երեք հարյուր հազար/ դրամ գումար: Համայնքի 2014 թվականի բյուջեում կատարել համապատասխան փոփոխություն և համայնքի բնակիչների և համայնքի բյուջեի ուժերով վերոնշյալ գումարը հատկացնել խմելու ջրի ջրագծի վերանորոգմանը:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Հովհաննիսյան Գարիկ | | | |
| Շահինյան Անդրանիկ | | | |

Արջուտ համայնքի ղեկավար՝ Վ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

27.06.2014թ. թիվ 09-Ա

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՐՋՈՒՏԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅԱՆ ՉԱՓԸ, ԳՅՈՒՂԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 8-րդ և 26-րդ կետերով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասով՝

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1.Հաստատել Արջուտի գյուղական համայնքի ղեկավարի, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել Արջուտի գյուղական համայնքի ավագանու 2014 թվականի ապրիլի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Արջուտի գյուղական համայնքի ղեկավարի վարձատրության չափը, գյուղապետարանի աշխատակազմի աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» թիվ 06-Ա որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է 2014 թվականի հուլիսի 01-ից:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | [signature] | | |
| Մկրտչյան Սաթենիկ | [signature] | | |
| Դալլաքյան Վազգեն | [signature] | | |
| Հովհաննիսյան Գարիկ | [signature] | | |
| Շահինյան Անդրանիկ | [signature] | | |

Արջուտ համայնքի ղեկավար՝ [signature] Վ. Մկրտչյան

Հավելված
Արջուտի գյուղական համայնքի ավագանու
2014 թվականի հունիսի 27-ի N 09-Աորոշման

# ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅԱՆ ԶԱՓԸ, ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

1. Աշխատակիցների թվաքանակը՝ 10։
2. Աշխատակազմի հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը՝

| ՀԱՍՏԻՔԻ ԱՆՎԱՆՈՒՄԸ | ՀԱՍՏԻՔԱՅԻՆ ՄԻԱՎՈՐԸ | ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԸ (ՀՀ դրամ) |
|---|---|---|
| Համայնքի ղեկավար | 1 | 209 000 |
| Համայնքի ղեկավարի տեղակալ | 1 | 154 000 |
| Աշխատակազմի քարտուղար | 1 | 154 000 |
| Աշխատակազմի առաջատար մասնագետ -հաշվապահ | 1 | 151 800 |
| Աշխատակազմի 1-ին կարգի մասնագետ | 2 | 96 000 |
| Աշխատակազմի 2-րդ կարգի մասնագետ | 1 | 92 400 |
| Տեխ. սպասարկման անձնակազմ | | |
| Վարորդ | 1 | 77 700 |
| Հավաքարար | 1 | 66 200 |
| Պահակ - բակապահ | 1 | 66 200 |

Համայնքի ղեկավար՝ Վ. Շ. Մկրտչյան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ**
**ԼՈՌՈՒ ՄԱՐԶ**
**ԱՐՋՈՒՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ**

27.06.2014թ. թիվ 10-Ա

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

## «ԲԱԿՏԵԿ ԷԿՈ» ՍՊԸ_ԻՆ ՈՍԿՈՒ ՀԱՆՔԱՎԱՅՐԻ ՇԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով

Արջուտ համայնքի ավագանին որոշում է՝

1. Համայնքի տարածքում «Բակտեկ էկո» ՍՊԸ-ի կողմից ոսկու հանքավայրի շահագործման ծրագրի իրականացման համար տալ համաձայնություն և հավանություն, որի իրականացման համար պահանջվում է հողամասերի օգտագործում, և հանքավայրի շահագործումը կատարել գործող օրենքների սահմաններում:
2. Կնքել համապատասխան պայմանագրեր և աշխատանքները կատարել ժամանակին և պատշաճ որակով:

| Ավագանու անդամներ | Կողմ | Դեմ | Ձեռնպահ |
|---|---|---|---|
| Կարապետյան Ռոբերտ | | | |
| Մկրտչյան Սաթենիկ | | | |
| Դալլաքյան Վազգեն | | | |
| Հովհաննիսյան Գարիկ | բացակա | | |
| Շահինյան Անդրանիկ | բացակա | | |

Արջուտ համայնքի ղեկավար Վ. Մկրտչյան